ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր ՀԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ

ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱՅԺԱՐՈՅՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 3 - 4 (16199) ՇԱԲԱԹ, 11 ՀՈՒՆՎԱՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՀՊԱՐՏԱՆՈՒՄ Է ԻՐ ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԶԱՎԱԿՆԵՐՈՎ»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հունվարի 6-ին շնորհավորել է Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդներին Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ՝: Շնորհավորական ուղերձում ասված է. «Թանկագին հայրենակիցներ, ի սրտե շնորհավորում եմ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոների առթիվ, որ ձեր եկեղեցին նշում է հունվարի 6-ին: Հայերի ու վրացիների բարեկամությունն այնքան հին է, որքան մեր երկրների պատմությունը: Վրաստանում ապրող էթնիկ հայերը դարեր շարունակ քրտնաջան աշխատում են երկրի կերտման ու զարգացման համար: Վրաստանը հպարտանում է իր հայ զավակներով՝ գիտնականներով, մշակութային ու հասարակական գործիչներով:

Մաղթում եմ առողջություն, երջանկություն, խաղաղություն եւ բարեկեցություն ձեզ եւ ձեր ընտանիքներին»:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԴԵՌ ԵՐԿԱՐ ԿԱՇԽԱՏԵՆՔ ՄԻԱՍԻՆ՝ Ի ՆՊԱՍՏ ՄԵՐ ԵՐԿՐԻ»



Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին շնորհավորել է Վրաստանում բնակվող բոլոր հայերին Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի կապակցությամբ:

«Այսօր՝ հունվարի 6-ին, Հայ Առաքելական եկեղեցին նշում է Սուրբ Ծննդյան տոնը: Շնորհավորում եմ մեր հայ հայրենակիցներին լուսավոր այս տոնի առթիվ: Վրացիներն ու հայերը միասին անցել են բազում փորձությունների ու հաղթանակների միջով, եւ մեր բազմադարյա եղբայրությունն ու բարեկամությունը անսասան են: Համոզված եմ՝ մենք դեռ երկար կաշխատենք միասին՝ ի նպաստ մեր երկրի»,- ասված է Իրակլի Ղարիբաշվիլու ուղերձում:

Վրաստանի վարչապետը հայ հայրենակիցներին մաղթել է ընտանեկան երջանկություն, խաղաղություն, բարեկեցություն եւ մեծ հաջողություններ:

ՄԱՂԹՈՒՄ ԵՄ ՆՈՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

«Վրաստան» թերթի խմբագրությանը.

Ի սրտե շնորհավորում եմ թերթի կոլեկտիվին ու ընթերցողներին Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ, մաղթում երջանկություն, առաջընթաց ու բարօրություն: Թող 2014 թվականը ձեզ համար դառնա հաջողությունների եւ արգասաբերության տարի:

Տասնամյակներ շարունակ ձեր թերթը նշանակալի ավանդ է ներդրել վրաց եւ հայ ժողովուրդների պատմական եղբայրական հարաբերությունների է'լ ավելի խորացման ու տարածման գործում: Համոզված եմ, որ այն առաջիկայում էլ կշարունակի բարության, փոխըմբռնման, համագործակցության սերմացման, ընթերցողներին մեր երկրում տեղի ունեցող իրադարձությունների լիարժեք, արդարացի եւ օբյեկտիվ տեղեկատվության փոխանցման իր առաքելությունը:

Ամանորի առթիվ ձեզ եւ ձեր ընթերցողներին մաղթում եմ ոչ միայն ձեր ամենանվիրական իղձերի կատարում, այլեւ այն սպասելիքների արդարացում, որոնք առնչվում են նոր Վրաստանի հետ: Համոզված եմ, որ վիրահայ համայնքը, որը միշտ կարեւոր դեր է կատարել վրաց հասարակայնության, պետականության ձեւավորման ու զարգացման գործում, այսուհետեւ եւս վրաց ժողովրդի, մյուս ազգերի ներկայացուցիչների հետ իր արժանի լուման կներդնի ժողովրդավարական Վրաստանի շինարարության գործում:

ՊԱՍՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ԳԱՂՏՆԱԶԵՐԾՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Նոյեմբերի 10-ին կայացավ Վրաստանի կառավարության ընթացիկ տարվա անդրանիկ նիստը: Նիստին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հետաքրքրվեց հարկային օրենսգրքում կատարվելիք փոփոխությունների շուրջ իրականացվող աշխատանքների ընթացքով:

Արձագանքելով ֆինանսների նախարար Նոդար Խադուրու հայտարարությանը՝ ըստ որի, առանձին գերատեսչություններ տեղեկացվում են հարկային գաղտնիքների մասին, իսկ հիմնականում դրանք չեն հրապարակվում, վարչապետը քննադատեց նման մոտեցումը՝ հայտարարելով, որ բոլոր գերատեսչությունները պետք է տեղեկացված լինեն: Վարչապետի նախաձեռնությամբ, որոշում ընդունվեց դիմել խորհրդարանին հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ: Առաջարկության համաձայն, հարկային մարմնին տրվում է առանց դատարանի թույլտվության կամ հարկատուի համաձայնությամբ, հարկային գաղտնիքը կառավարությանը, բոլոր գերատեսչություններին, իրավապահ մարմիններին, ժողովրդական պաշտպանին եւ օրենքով նախատեսված մյուս սուբյեկտներին ներկայացնելու իրավասություն:

Անդրադառնալով քրեական օրենսգրքի «օրենքով գողերին» առնչվող հարցին՝ վարչապետը հայտարարեց, որ այն չի վերանայվի: Վարչապետի տեսակետը պաշտպանեց նաեւ ներքին գործերի նախարար Ալեքսանդր Չիկվաիձեն:

ՇՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայ Առաքելական եկեղեցին հունվարի 6-ին նշեց Հիսուս Քրիստոսի Ծննդյան ու Աստվածահայտնության տոնը, որը Հիսուսի ծննդյան եւ մկրտության հիշատակումն է:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց պատարագ: Կաթողիկոսը հայրապետական մաղթանք հղեց համայն հայությանը: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը մասնակցեց Սուրբ պատարագին:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Հունվարի 6-ի առավոտից տոնական տրամադրությունն էր իշխում Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում: Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի կապակցությամբ, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում մատուցվեց Սուրբ պատարագ: Պատարագիչն էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հավլաբարի Սուրբ էջմիածին եկեղեցի այցելեցին եւ Սուրբ Ծննդյան տոնական պատարագին ներկա գտնվեցին Վրաստանի խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԵՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՆՔ ԲԵՐՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ.

Թույլ տվեք «Վրաստան» թերթի միջոցով, Վիրահայոց թեմի հոգեւոր դասի եւ պաշտոնեության անունից, սրտի անհուն ուրախությամբ շնորհավորել Նոր տարվա եւ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության շնորհաբեր տոների առիթով:

Նվիրական այս տոների առիթով Առաջնորդական մեր օրհնությունն ենք բերում Վրաստանում բնակվող մեր եկեղեցու զավակներին: Հիրավի, ինչպես պատմության քառուղիներում, այնպես էլ այսօր Առաքելական մեր Սուրբ եկեղեցին աշխարհասփյուռ հայության հոգեւոր, մշակութային եւ ազգային կյանքում շարունակում է ազգախնամ իր առաքելությունը: Այդպիսի կոչումով է նաեւ գործում Վիրահայոց թեմը՝ Վրաստանի ողջ տարածքում հավաքում է արվեստի եւ մշակույթի անդաստանում գործող զավակներին, մխիթարում սգավորներին եւ կողքին է կանգնում կարիքավորների: Հայ եկեղեցու յուրաքանչյուր զավակ վայելում է մեր սերն ու հարգանքը եւ համարվում է հոգեւոր գանձ մեր ժողովրդի համար: Ուստի, Սուրբ Ծննդյան տոնական ուրախությամբ աղոթում ենք Հայոց եկեղեցու, Հայաստան եւ Վրաստան երկրների, աշխարհասփյուռ հայության միասնության, լուսավոր ներկայի եւ հաղթական ապագայի համար:

Թող Ամենազոր Աստծու Սուրբ Ծնունդը ամրացնի հավատը մեր ժողովրդի եւ 2014թ. դարձնի նոր ձեռքբերումների, արարումների տարի ու ողջ աշխարհի մադկությանը պարգեւի Հիսուսի սերն ու հաշտությունը: «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»: Աղոթքով եւ օրհնությամբ՝

Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյան

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ

ՇԱՏ ԲԱՆ ԱՐՎԵԼ Է, ՍԱԿԱՅՆ ԱՆԵԼԻՔՆԵՐՆ ԷԼ ՇԱՏ ԵՆ

Ինչո՞վ էր երկրի, մեր տարածաշրջանի, առավել եւս մեր Ախալքալաքիի համար առանձնահատուկ 2013-ը: Ըստ իս, այն նշանավորվեց ենթակառույցային բազմաբնույթ նախագծերի իրականացմամբ: Ուրախությամբ ցանկանում եմ նշել, որ Ախալքալաքին այն բացառիկ մունիցիպալիտետների թվին է պատկանում, որտեղ տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության հովանու ներքո իրականացված բոլոր նախագծերը լրիվությամբ կատարվեցին: Շատ բան է արվել, թեպետ անելիքներն էլ շատ են:

Ինչ վերաբերվում է իմ՝ որպես օրենսդիր գերագույն մարմնի պատգամավոր, գործունեությանը, ապա, որպես մարդու իրավունքների պաշտպանության խորհրդարանական կոմիտեի անդամ, առանձնակի ուշադրություն եմ հատկացրել ազգային, կրոնական փոքրամասնությունների, սահմանափակ հնարավորություններով մարդկանց իրավունքների պաշտպանության հարցերին:

Ի սրտե ցանկանում եմ շնորհավորել բոլոր ախալքալաքցիներին, բոլոր վիրահայերին, ողջ Վրաստանին Ամանորի ու Սուրբ Ծննդյան առթիվ: Ամենայն բարիք ու հաջողություն Ձեզ, բարեկամներ, երջանկությունն ու ուրախությունը թող թեւածի ձեր ընտանիքներում:

ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Ախալքալաքիի շրջանից

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԻ

Անցյալ տարին ինձ համար ձեռքբերումների եւ նպատակների կենսագործման տարի էր: 2013 թվականին սկսեցի աշխատել Վրաստանի Հանրային հեռուստատեսությունում՝ որպես «Մոամբե» հայկական լրատվական հաղորդման հաղորդավար, սկսել եմ անել նաեւ իմ հեռուստալրագրողական առաջին քայլերը: Մեր խմբագրությունը լուսաբանում է վիրահայ համայնքում տեղի ունեցող իրադարձությունները, ներկայացնում երկրի կարեւոր անցուդարձը: Ու թեեւ տնտեսագետի մասնագիտություն ունեմ, բայց նաեւ երգում եմ եւ հանդես գալիս «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի «Ներսես Շնորհալի» համույթում: Ամանորի առիթով շնորհավորանքի իմ խոսքն եմ ուզում հղել հատկապես վիրահայ երիտասարդներին՝ մաղթելով բոլորին, նախեւառաջ, առողջ ապրելակերպ: Բարի գալուստ 2014 թվական, ուր մյուսների նման ես նույնպես բազում անելիքներ ունեմ:

ԱՆՆԱ ՊՈՂՈՍՈՎԱ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յանը, դատարանի կողմից լիազորությունները կանգնեցրած Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան, Վրաստանի հաշտվողականության եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետական նախարար Պաատա Զաքարեիշվիլին, Վրաստանի պատժակատարողական եւ պրոբացիայի նախարար Սոզար Սուբարը, Թբիլիսիի սակրեբուլոյի անդամներ Նիկոլոզ Բաչիլավան, Զաալ Սամադաշվիլին, «Վրաստանի լրատվամիջոցների զարգացման հիմնադրամի» վարչության նախագահ Թամար Կինծուրաշվիլին, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանի տեղակալ Վահագն Աֆյանը, դեսպանության այլ դիվանագետներ, հոգաբարձուների խորհրդի անդամներ:

Հընթացս Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով: Եկեղեցում տարածվեց Մանուկ Հիսուսի ծննդյան եւ Աստվածահայտնության ավետիսը:

Թեմական առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ, Սուրբ պատարագի վերջում կատարվեց Ջրօրհնեքի արարողություն, եւ եկեղեցու Խաչի կնքահայր դարձավ արժանավոր հայորդի, հավատավոր քրիստոնյա Յուրի Երեմյանը:

Հավարտ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդը շնորհակալության խոսքեր ուղղեց վրաց պետության եւ կառավարության ներկայացուցիչներին Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Հայոց եկեղեցու հավատացյալներին շնորհավորելու կապակցությամբ: Սրբազան հայրը, դիմելով ներկաներին, արժեւորեց Վրաստանում հաստատված տեղի հայերի հավատարմությունը երկրին ու պետությանը՝ շեշտելով նրանց ծառայությունը նաեւ վրացական բանակում ու ոստիկանության նվիրվածությունը երկրում կարգ ու կանոնի պահպանմանը: Թեմական առաջնորդը ընդգծեց վիրահայերի հասարակության անբաժանելի մասնիկ լինելու հանգամանքը:

Այնուհետեւ, հավաքվածներին Սուրբ Ծնունդի, Աստվածահայտնության եւ Ջրօրհնեքի կապակցությամբ շնորհավորանքի խոսքերով դիմեց Վրաստանի հաշտվողականության ու քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին: Նա փոխանցեց Վրաստանի վարչապետի շնորհավորանքները եւ, մասնավորապես, ասաց.

- Եկել եմ փոխանցելու երկրի վարչապետ պարոն Ղարիբաշվիլու շնորհավորանքները եւ կիսելու այն մեծ ուրախությունը, որը գալիս է Սուրբ Ծննդյան ու Ջրօրհնեքի հրաշափառ տոներից: Վրաստանի ազգային, մշակութային եւ կրոնական բազմազանությունը մեր երկրի ամենամեծ հարստությունն է: Մեր երկիրը հպարտ է այն մշակութային ժառանգությամբ, որը ստեղծել են այստեղ բնակվող տարբեր ազգային ու կրոնական խմբերի ներկայացուցիչները, իսկ դրանցից հնագույնը հայ մարդն է եւ վիրահայ համայնքը: Մեր պարտքն է պահել ու պահպանել այս ժառանգությունը՝ այն փոխանցելով սերունդներին:

Տոնական Սուրբ պատարագից հետո երկրի պետական այրերը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հետ միասին, ներկա գտնվեցին Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում Վրաստանի Հայ կանանց «Շուշանիկ» միության (նախագահ՝ Սուսաննա Խաչատրյան) կազմակերպած ավանդական հայկական գաթայի փառատոնին:

Տոնական օրը Սուրբ պատարագով սկսվեց նաեւ Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում: Պատարագիչն էր Աջարիայի, Գուրիայի եւ Իմերեթիի հայության հոգեւոր հովիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանը: Տոնական պատարագին ներկա էին Աջարիայի Ինքնավար Հանրապետության վարչապետ Արչիլ Խաբաճեն եւ Բաթումիի քաղաքապետ Ջեմալ Անանիձեն:

Հունվարի 6-ին տոնական Սուրբ պատարագներ մատուցվեցին եւ Սուրբ Ծնունդն ու Մկրտությունը հավուր պատշաճի նշվեցին Վիրահայոց թեմի բոլոր գործող եկեղեցիներում:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ

2013-Ը ՆՈՐ ՀԵՏՔ ԹՈՂԵՑ ՄԵՐ ՇՐՋԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ

Ամանորի եւ Սուրբ Ծնունդի առիթով, «Վրաստան» թերթի էջերից, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ, ցանկանում առողջություն, հաջողություն, խաղաղություն:

2013-ը անկասկած, իր խոր հետքը թողեց մեր շրջանի կյանքի վրա: Պետության օգնությամբ ու օժանդակությամբ շինարարական բազում աշխատանքներ կատարվեցին, նկատելիորեն բարձրացավ բնակչության կենսամակարդակը, բարելավվեցին կենցաղային պայմանները:

Ավելի մեծ ծրագրեր են նախատեսվում նոր տարում՝ 2014 թվականին, անհամեմատ մեծ մասշտաբի շինարարական աշխատանքներ կտարվեն, նոր օբյեկտներ կկառուցվեն, պատշաճ ուշադրություն կդարձվի գյուղի զարգացմանը: Նշենք միայն մեկ փաստ, որ 2014-ին շրջանի բյուջեն ավելանալու է 1 միլիոն լարիով եւ կկազմի 4,680 հազար լարի: Հույս ու հավատով ենք նայում նոր տարվա՝ գիտենալով, որ այն կլինի բարեբեր, մեզ ուրախացնող շատ բան կտա:

Շնորհավոր բոլորիս Ամանորը, Սուրբ Ծնունդը: Թող յուրաքանչյուր հարկի տակ խաղաղություն լինի, ծնունդ ու կնունք, առողջություն ու երջանկություն:

ԳԱԳԻԿ ԿԱՐՍԼՅԱՆ

Նինոծմինդայի շրջանային վարչության նախագահ

«ՀԱՅԱՐՏՈՒՆԸ» ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ԻՐ ԲԱՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Մեզ համար անցած տարին բեղմնավոր էր: Շնորհիվ եռամյա պատմություն ունեցող «Հայարտուն» մշակույթի, կրթության եւ երիտասարդության կենտրոնի ողջ անձնակազմի, ես ուրախությամբ փաստում եմ, որ ե'ւ հայանպաստ, ե'ւ հայ-վրաց բազմադարյա բարեկամական կապերն առավել ամրացնող ինն ու ավելի տասնյակ ծրագրեր ու միջոցառումներ իրականացրինք: Եվ դա շնորհիվ թեմի առաջնորդ Վազգեն Սրբազանի ու կենտրոնին մշտապես աջակցող բարերար-մեկենասների ու, ինչ խոսք, միաձույլ գործող աշխատակազմի, մեզ հաջողվել է վիրահայության շրջանում առավել քան աշխուժություն մտցնել, առավել մոտեցնել արմատներին, այլոց պատմել հայ մշակույթի մասին...

2014 թվականին «Հայարտուն» կենտրոնը շարունակելու է իր ստեղծած բարի ավանդույթները: Շնորհավորում եմ համայն Վրաստանի Ամանորն ու Սուրբ Ծնունդը, մաղթում ժողովրդանպաստ ու արգասաբեր գործունեություն ցանկացած բնագավառում:

ԼԵՎՈՆ ՉԻԴԻԼՅԱՆ

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի համակարգող

ՄՆՈՒՆԴՈՎ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՎԱՉԵ ԿԱԼԱՉԵ

Վրաստանի էներգետիկայի նախարար, փոխվարչապետ Կախի Կալաձեի եւ հայտնի դիզայներ Անուկի Արեշիձեի ընտանիքում համալրում է: Կալաձեների ընտանիքի երկու որդիներին՝ Լեւանին ու Կախաբերին, հունվարի 9-ին ավելացավ երրորդը՝ Վաչեն:

Շնորհավորում ենք Կալաձեների ընտանիքին արու զավակի ծննդյան առթիվ, իսկ մանկիկին մաղթում անամպ երկինք, երջանիկ մանկություն՝ բարգավաճ ու ժողովրդավարական Վրաստանում:

2014-Ը ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄԵՆԱԵՐՋԱՆԻԿՆ Է

Նոր տարին իմ եւ իմ ընտանիքի համար, իրոք, երջանիկ տարի դարձավ: Անցնող ու Գալիք տարիներ, որ առավել քան երջանկաբեր էին ու լինելու են դեռ, հատկապես իմ ընտանիքի համար, ըստ որում՝ ե'ւ համույթի, ե'ւ անձնական: Ինչ վերաբերում է անձնական երջանկությանս... նույնիսկ չգիտեմ՝ բառերով ինչպես արտահայտեմ, քանի որ Աստծու ողորմությամբ, ես եւ իմ ամուսինը՝ Գարեգինը, երկա՜ր սպասելուց հետո, դեկտեմբերի 26-ին միանգամից երկու հրաշքի՝ Գեւորգի եւ Մարիայի ծնողներ դարձանք ու 2014 թվականը դիմավորելու ենք չորսով: Կյանքը հրաշք է, եւ ես մաղթում եմ բոլորին վերապրել ու հասկանալ դա: Թող 2014 թվականը, միայն մանկանց ուրախ ճիչերի տարի լինի: Մանավանդ որ, ամուսինս Սիրիայի Հալեպ քաղաքից է, ես խաղաղություն եմ հայցում բոլոր այն մարդկանց համար, ովքեր, մեղսագործ ձեռքերի պատճառով, այսօր պատերազմի արհավիրքն են ապրում:

Ուրախ եմ, որ «Անին», որն ունի ութ տարվա պատմություն, անցած տարում նոր ստեղծագործական նվաճումներ ունեցավ: 2013-ին եւս նոր բեմեր նվաճեցինք, հաջողություններ գրանցեցինք: Մենք հաջողությամբ ելույթ ունեցանք Վրաստանի շատ քաղաքներում ու այլ վայրերում: Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից մեզ շնորհվեց «Սայաթ-Նովա» ոսկե մեդալ, նաեւ այլ երկու Ոսկե մեդալներ՝ ժողովրդականը պահպանելու ու տարածելու դիմաց:

Խաղաղություն բոլոր ընտանիքներին... Շնորհավո՜ր Ամանոր:

ԱՆԳԵԼԻՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ-ՔՈՉՅԱՆ

Թբիլիսիի «Անի» ժողովրդական պարային համույթի հիմնադիր-ղեկավար

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՍԱՀՄԱՆՎԵԼ Է «ԱՆԿԱԽ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

Վրաստանի կառավարությունը սահմանում է անկախ հիմնադրամ, որի բաժնետոմսերի 100 տոկոսը կպատկանի կառավարությանը եւ դրա կապիտալը կանցնի պետական գործընկերային հիմնադրամին:

Անկախ հիմնադրամը իրավասու կլինի տնօրինելու այնպիսի պետական ընկերությունների ակտիվները, ինչպիսիք են Վրաստանի երկաթուղին, նավթի եւ գազի կորպորացիան, պետական էներգահամակարգը, էներգահամակարգերի կոմերցիոն օպերատորը, նաեւ «ԹԵԼԱՍԻ» էներգաբաշխման թբիլիսյան ընկերության կառավարությանը պատկանող բաժնետոմսերը: Կառավարությունն արդեն խորհրդարանի քննարկման է ներկայացրել վրացական անկախ հիմնադրամ բաժնետիրական ընկերության մասին օրենքի նախագիծը, որի նպատակն է ներդրումային նախագծերի զարգացման եւ մասնավոր շահագետ նախագծերում ներդրումների ապահովումը:

Ներկայումս գործող գործընկերային հիմնադրամը կվերափոխվի ռազմավարական զարգացման հիմնադրամի, որը կդառնա անկախ հիմնադրամի գործընկերը: Կառավարությունում գտնում են, որ գործընկերային հիմնադրամի ներկայիս կառույցը չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին եւ ռազմավարական ընկերություններում պետության փայաբաժինը լրիվությամբ չի ապահովագրված ռիսկերից:

Անկախ հիմնադրամը նաեւ կսահմանի ռազմավարական ակտիվների ընկերություն, որտեղ էլ կփոխանցվեն պետական վերոնշյալ ակտիվները:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՍՏԱՏԵԼ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ 500 ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիայի գլխավորած տարածաշրջանային զարգացման հանձնաժողովը քննարկել է 2014 թվականի համար նախատեսված նախագծերը եւ հաստատել է դրանցից 500-ը:

Ընդհանուր առմամբ, հանձնաժողովը քննարկել է 1500 նախագիծ եւ որոշել է նախնական փուլում ֆինանսավորել դրանցից 500-ը: Առաջնահերթություններին համապատասխան նախագծերը մշակվել են տեղական իշխանությունների կողմից:

Առաջին չորս գլխավոր առաջնահերթություններն են՝ տարերային աղետների կանխումը, զբոսաշրջության զարգացման աջակցությունը, գյուղերում ջրամատակարարման բարելավումը եւ մանկապարտեզների կարգավորումը:

Հանձնաժողովը նախագծերը ներկայացնելու է կառավարությանը, որից հետո կիրականացվի նախագծման ծախսերի հաշվարկումը:

Հիշեցնենք, որ 2013 թվականին տարածաշրջանային նախագծերի հիմնադրամից տարածաշրջանային նախագծերի համար հատկացվել էր 230 միլիոն լարի:

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԵՏ ԱՅՑԵԳՐԵՐԻ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ ՀՈՒՆՎԱՐԻՑ

Վրաստանի քաղաքացիներին Շվեյցարիայի այցեգրերի դյուրացման կարգի մասին պայմանագիրը ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ից:

Հիշեցնենք, որ այդ պայմանագիրը ստորագրվել է սեպտեմբերի 13-ին, Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեի եւ Շվեյցարիայի դաշնային կանցլեր Դիդյե Բուրգհայտլերի կողմից: Այն նախատեսում է այցեգրերի դյուրացված հանձնում գործարարներին, լրագրողներին, նաեւ Վրաստանի այն քաղաքացիներին, ում ընտանիքի անդամներն ունեն Շվեյցարիայում ապրելու իրավունք:

Բացի այդ, 90 օրով շենգենյան գոտում գտնվելու այցեգրի համար Վրաստանի քաղաքացին 60-ի փոխարեն հետայսու վճարելու է 35 եվրո: Ավելի երկար ժամկետով շենգենյան գոտում գտնվելու մաքսատուրքը մնում է անփոփոխ՝ 60 եվրո:

Այցեգրերի հանձնման հետ մանրամասն տեղեկատվության հետ կարելի է ծանոթանալ շվեյցարական դեսպանության կայքէջում. http://www.eda. admin.ch/tbilisi:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԴՅՈՒՐԱՑՐԵԼ Է ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ

Վրաստանը դյուրացրել է վրաց բեռնափոխադրողների համար այցեգրերի հանձնման ընթացակարգը: Այդ մասին հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Նաթիա Միքելաձեն: Նրա տեղեկատվությամբ, այդ մասին վրացական կողմին Ռուսաստանի ԱԳՆ նախարարությունը Վրաստանում Շվեյցարիայի դեսպանության միջոցով տեղեկացրել էր դեռեւս 2012 թվականի դեկտեմբերի 23-ին:

Մոտ ժամանակներում, Վրաստանի էկոնոմիկայի նախարարության տրանսպորտի գործակալության պաշտոնական կայքում հրապարակվելիք պաշտոնական պարտադիր ընթացակարգերի անցումից հետո, վրաց բեռնատարների վարորդներին արտոնյալ պայմանակարգով կտրվեն գործարար, բազմաօգտագործման այցեգրեր, մեկ տարի ժամկետով: Արագացված կարգով (երեք աշխատանքային օրում), այցեգրի ձեւավորման հյուպատոսական տուրքը կազմում է 310 դոլար, իսկ սովորական կարգով (10 աշխատանքային օրում)՝ 160 դոլար:

Փոխնախարարի պարզաբանմամբ, Ռուսաստանի կողմից վրաց բեռնափոխադրողների այցեգրերի դյուրացման որոշումը կնպաստի երկկողմ եւ տարանցիկ բեռնա եւ ուղեւորափոխադրումների ոլորտում վրաց վարորդների զբաղվածությանը եւ երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության ավելացմանը, ինչը դրական ազդեցություն կգործի վրացական էկոնոմիկայի վրա:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՓԱԿԵԼ Է ՍԱՀՄԱՆԸ

Վրաստան-Ռուսաստանի պետական սահմանի աբխազական հատվածը մինչեւ մարտի 23-ը փակ կլինի: Այդ մասին տեղեկատվությունը տարածել են ռուսական լրատվամիջոցները:

Սահմանափակումն առնչվում է Սոչիի օլիմպիական խաղերի հետ կապված անվտանգության միջոցառումներին, որոնք ուժի մեջ են մտել հունվարի 8-ից: Բռնազավթված Աբխազիան Ռուսաստանի հետ կապող Փսոու գետի վրա գտնվող անցակետով ավտոմեքենաների երթեւեկությունը կարգելվի: Միաժամանակ, արգելվում է Սոչիի եւ նրա մերձակա տարածքում այդ երկրամասում չգրանցված ավտոմեքենաների երթեւեկությունը: Անվտանգության արտակարգ պայմանակարգի կիրարկման մասին որոշումը ընդունել է անձամբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը:

ՈԼՈՐՏ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՓԵՏՐՎԱՐԻՆ

Վրաստանի վարչապետին առընթեր տնտեսական խորհուրդը քննարկեց 2014 թվականի սակավահող ֆերմերներին գարնանային աշխատանքների կատարման աջակցության նախագիծը:

Այն նախատեսում է օգնություն ինչպես մեխանիզացիայի, այնպես էլ՝ գյուղատնտեսական նյութերի տեսանկյունից:

Նախագիծը մոտ ժամանակներում կհաստատվի գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության կողմից, եւ այն երկրի մասշտաբով կգործարկվի 2014 թվականի փետրվարից: Նախագիծը կֆինանսավորվի ինչպես պետական բյուջեի, այնպես էլ՝ ոչ բյուջետային միջոցներով: Ընդհանուր առմամբ, օգնություն կտրվի 700 հազար ֆերմերի:

Տնտեսական խորհրդի նիստում, որը նախագահում էր վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, քննարկվեց նաեւ արտոնյալ ագրովարկերի նախագիծը: Այդ նախագծի շրջանակներում, ներկա դրությամբ, ներառված է 8 հազար սպառող, տրվել է ավելի քան 220 միլիոն լարիի վարկ, ընդ որում՝ ֆինանսավորվել է 348 ձեռնարկություն, որից 53-ը նոր է բացվել:

Տարեկան տոկոսադրույքը չի գերազանցում 3 տոկոսը: Ծրագրվել է հաջորդ տարվանից նախագիծն ընդլայնել եւ ներառել նոր բաղադրիչներ:



ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԱՅՑԵԼԻ ԹՈՒՐՔԻԱ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հունվարի 20-ին պաշտոնական այց կկատարի Թուրքիա:

Վրաստանի նախագահը Անկարայում հանդիպումներ կունենա Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի, վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանի եւ խորհրդարանի խոսնակ Ջեմիլ Չիչեքի հետ: Հանդիպումից հետո, երկու երկրների նախագահները հանդես կգան համատեղ մամուլի ասուլիսով:

Հիշեցնենք, որ Վրաստանի նախագահ ընտրվելուց հետո, Գիորգի Մարգվելաշվիլին իր առաջին արտասահմանյան այցը կատարել էր Բրյուսել, նոյեմբեր ամսին:

ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ԳՆԵԼ Է «APPLE» ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

Վրաստանի նախկին վարչապետ, միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին 2013 թվականին 1334568 ԱՄՆ դոլար գումարի բաժնետոմսերով դարձել է Apple Inc.Shares ընկերության բաժնետերը: Օրենքի համաձայն, 2013 թվականի դեկտեմբերի 31-ին լրացրած գույքային հռչակագրի համաձայն, Իվանիշվիլին գնել է Apple Inc.Shares-ի 2400 բաժնետոմս: Մի բաժնետոմսի գինը կազմում է 556,07 ԱՄՆ դոլար:

2012 թվականի Իվանիշվիլու հռչակագրում Apple Inc.Shares-ի բաժնետոմսերը չէին վավերացվել: Ինչպես հայտարարեց Բիձինա Իվանիշվիլու մամլո քարտուղարը, բաժնետոմսերի մի մասը փոխանցվել է Պիար-տեխնոլոգիաների հարցերով փորձագետ Սոսո Գալումաշվիլուն:

«Իվանիշվիլին ըստ արժանվույն գնահատեց Գալումաշվիլու հանձնարարականները եւ, որպես երաշխիքի նշան, նրան նվիրեց 1200 բաժնետոմս: Հաջորդ տարվա գույքային հռչակագրում անպայման կնշվեն «Սամսունգի» եւ «Ֆ.Ա. Բարսելոնայի» բաժնետոմսերը, որոնք նույնպես գնվել են Սոսո Գալումաշվիլու խորհրդով»,- ընդգծեց Իվանիշվիլու մամլո քարտուղարը:

ԳԻՆՈՒ ՀԱՅՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Վրաստանի իշխանությունները պլանավորում են ծրագիր իրականացնել, ըստ որի,՝ գիտականորեն կհիմնավորվի, որ Վրաստանը հանդիսանում է գինու հայրենիքը:

«Ծրագիրը գիտական բնույթ է կրում եւ նպատակ ունի գիտական հիմնավորում տալ վրացական գինեգործության արմատներին, որպեսզի գինու հայրենիքի վերաբերյալ վեճերը հիմնավորվեն, եւ ապացույցները դրվեն սեղանին»,- հայտարարել է գինու ազգային գործակալության ղեկավար Լեւան Դավիթաշվիլին: Դավիթաշվիլին նշել է, որ իրենք համոզված են, որ Վրաստանը գինու հայրենիքն է, բայց դա պետք է ապացուցել:

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ ԵՆ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Վրաստանի երիտասարդական հարցերով եւ սպորտի նախարարությունը հրապարակել է անցած տարվա լավագույն մարզիկների ցուցակը: 2013 թվականի Վրաստանի լավագույն մարզիկ է ճանաչվել ձյուդոյի մարզաձեւում աշխարհի եւ Եվրոպայի թիմային չեմպիոն Ավթանդիլ Չրիկիշվիլին: Երիտասարդ մարզիկի անվանակարգում լավագույնն է ճանաչվել ըմբշամարտիկ Բենո Պետրիաշվիլին, լավագույն պարասպորտսմենը՝ Բեսիկ Լեկիշվիլին (արմռեսլինգ), ոչ օլիմպիական մարզաձեւերում՝ Վախթանգ Չիդրաշվիլին (սամբո), լավագույն մրցավար՝ Վլադիմիր Նուցուբիձեն (ձյուդո), լավագույն մարզական ֆեդերացիա՝ ձեռքի գնդակի ֆեդերացիան, լավագույն հավաքականը՝ ձյուդոյի հավաքականը, լավագույն մենեջերը՝ Գիորգի Նիժարաձեն (ռեգբիի միության նախագահ), լավագույն մարզուհին՝ Մարիամ Ջանաշվիլին (ձյուդո), լավագույն մարզիչը՝ Իրակլի Ուզնաձեն (ձյուդո):

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՊԱԱՏԱ ՉԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԱԿՆՈՑՆԵՐԸ ՀԱՆԵՑԻՆՔ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻՆ ԻՐԱՏԵՍՈՐԵՆ ԵՆՔ ՆԱՅՈՒՄ»

2014 թվականի հունվարի 1-ից փոխվել է Վրաստանի վերաինտեգրման հարցերով պետնախարարի աշխատակազմի անվանումը: Վրաստանի կառավարության որոշմամբ, «Վերաինտեգրման հարցերով պետնախարարի» պաշտոնը ներկայումս կոչվում է «Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար»:

Անվանման փոփոխության եւ դրա հետ կապված մոտեցումների հարցերով մենք զրուցեցինք Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար ՊԱԱՏԱ ՉԱՔԱՐԵԻՇՎԻԼՈՒ հետ:

- Բատոնո Պաատա, ինչո՞վ էր պայմանավորված անվան փոփոխման անհրաժեշտությունը:

- Նախ հարկ եմ համարում ընդգծել, որ նոր անվանումը իր մեջ ներառում է երկու ուղղություններ՝ հակամարտություններն ու ազգային փոքրամասնությունների ինտեգրումը: «Հաշտեցման» բաղադրիչը վերաբերում է հակամարտությունների կարգավորմանը, իսկ «Քաղաքացիական իրավահավասարությունը»՝ մեր այն քաղաքացիներին, ում վերաբերում են ինտեգրման հարցերը:

Նրանից հետո, երբ Վրաստանում հիմնվեց վերաինտեգրման նախարարությունը, որը փոխարինեց հակամարտությունների կարգավորման նախարարությանը, այն ծայրաստիճան բացասական արձագանք առաջացրեց Սուխումիում եւ Ցխինվալիում: Նրանք ուղղակի ընդհատեցին այդ նախարարության ներկայացուցիչների հետ բանակցությունները:

Նրանց համար «վերաինտեգրում» արտահայտությունը նշանակում էր, որ այդ տարածաշրջանները, առանց հաշվի առնելու մարդկանց ցանկությունը, վերաինտեգրվելու են մնացած Վրաստանին: Մենք այլ մոտեցում ունենք: Մենք ցանկանում ենք հակամարտությունները կարգավորել բանակցությունների ուղիով, բոլոր կողմերի շահերի հաշվառմամբ: Չեմ կարծում, որ աբխազներն ու օսերը մեծ օգուտ են ստացել, որ Ռուսաստանն իրենց ճանաչել է: Վրաստանը նրանց ինքնաարտահայտման այլ ձեւաչափ է առաջարկում: Մենք Աբխազիային եւ Ցխինվալիի տարածաշրջանին առաջարկում ենք բանակցություններն սկսել մաքուր էջից, քանի որ Վրաստանում իրոք իշխանությունը էականորեն փոխվել է, այն նորովի է դիտում ինչպես անցյալը, այնպես էլ՝ ապագա հեռանկարները:

Ուղղակի մենք հանեցինք վարդագույն ակնոցները եւ ամեն ինչին սկսել ենք իրատեսորեն նայել: Իսկ իրականությունն այն է, որ Վրաստանը շարժվում է Եվրոպայի ուղղությամբ, իսկ Ռուսաստանը Կովկասում կորցնում է իր ազդեցությունը:

Գերատեսչության անվանման մեջ «վերաինտեգրում» արտահայտությունն արգելքներ էր հարուցում աբխազական եւ օսական հասարակության կապերում: Իսկ նոր անվանումը չեզոք է ու ներառում է երկու ուղղությունները, եւ մենք հուսով ենք, որ այդ փոփոխության շնորհիվ, մեր ընդդիմախոսների փաստարկներից մեկը կհանվի:

- Որքանո՞վ է իրատեսական Թբիլիսիի եւ Սուխումիի, ինչպես նաեւ Թբիլիսիի եւ Ցխինվալիի միջեւ անմիջական երկխոսության իրականացումը:

- Ժամանակին Սաակաշվիլին հայտարարում էր, որ նրանց հետ հարաբերություններն իմաստ չունեն, քանի որ վերջիններս բանակցային կողմ չեն ներկայացնում եւ Ռուսաստանի ձեռքին միայն խամաճիկներ են: Դա աբխազներին ու օսերին զայրացնում էր:

Այժմ, երբ նրանց ուղղակի հարաբերություններ ենք առաջարկում, առաջին պլան են մղում նախապայմանները: Վախենում եմ, որ հասնենք այնպիսի ժամանակների, երբ կհամոզվենք, որ Սաակաշվիլին իրավացի էր, թեպետ դա չէի ցանկանա: Չէի ցանկանա՝ պարզվեր, որ աբխազներն ու օսերն իրենցից ընդհանրապես ոչինչ չեն ներկայացնում եւ անմիջական բանակցություններ պետք է վարվեն միայն Մոսկվայի հետ: Բոլոր դեպքերում, վրացական կողմը համբերություն ու ժամանակ ունի:

Այդ տարածաշրջաններում, իրոք, հիմնախնդիրները շատ են: Աբխազներն ու օսերը առավել լավ տնտեսական, քաղաքական եւ սոցիալական պայմաններում են ցանկանում ապրել: Անընդհատ բողոքներ են հնչում, որ այդ տարածաշրջանների բնակիչներին ոչ մի տեղ չեն թողնում: Օգնության համար պատրաստ ենք անել հնարավոր ամեն ինչ, ուշադրությունը բեւեռենք հումանիտար հարցերի վրա, սակայն այդ հարցերը ո՞ւմ հետ քննարկենք, չէ՞ որ անմիջական, ուղղակի բանակցությունների ձեւաչափ գոյություն չունի:

Կրկնում եմ, մենք պատրաստ ենք կողքի դնել բոլոր այն հարցերը, որոնք անընդունելի են մեզ եւ նրանց համար: Օրինակ՝ կարգավիճակի հիմնախնդիրը: Մենք կարող ենք քննարկել այն հարցերը, որոնցով հնարավոր է հասնել փոխընդունելի տարբերակների:

Մենք պատրաստ ենք այդ տարածաշրջանների հետ քննարկել բազում հրատապ հարցեր՝ ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական: Օրինակ, Ցխինվալիի դե ֆակտո իշխանությունը հաճախ էր բարձրացնում Ախալգորիի շրջանի գազի մատակարարման հարցը, միաժամանակ համոզված էր, որ Թբիլիսին դա կմերժեր: Հենց որ մեզանում իշխանությունը փոխվեց, ես անձամբ հայտարարեցի, որ համաձայն եմ այդ նախագծի հետ: Դրանից հետո, իրենց իսկ նախագծից օսերը հրաժարվեցին: Ստացվում է, որ, Վրաստանի կողմից նման մոտեցման վավերացումից հետո, նրանք ներփակվեցին եւ, որպես գլխավոր հիմնախնդիր, առաջադրեցին քաղաքական հարցեր: Նախկինում նրանք այդպես չէին վարվում:

- Կոնկրետ, ի՞նչ հարցեր են առաջադրում:

- Այսօր նրանք ամեն ինչ առնչում են ուժի չկիրառման մասին պայմանագրի ձեւակերպման հետ: Դա ծիծաղելի է, քանի որ Վրաստանը մի քանի անգամ ստանձնել է նման պարտավորությունը: Առաջին անգամ Սարկոզի-Մեդվեդեւ համաձայնագրի ստորագրման ժամանակ, որտեղ այդ կետը առանձնակի ընդգծված է, ի տարբերություն Ռուսաստանի, Վրաստանը կատարել է ստանձնած պարտավորությունները, հակամարտության գոտուց դուրս է բերել իր զորքերը: Եվրոպական դիտորդները հաստատում են, որ հակամարտության շրջաններում վրացական ռազմական տեխնիկայի կուտակումներ չկան:

Երկրորդ անգամ իր նախագահության ժամանակ դա կատարեց Միխեիլ Սաակաշվիլին: Հանդես գալով Եվրախորհրդարանի գագաթաժողովին՝ նա հայտարարեց, որ Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի նկատմամբ ռազմական ուժ չի կիրառվի: Եվ դա ասվեց ոչ թե ինչ-որ երկրորդական հավաքին, այլ պաշտոնական ամբիոնից:

Եվ վերջապես, 2013 թվականի մարտին, արդեն նոր իշխանության օրոք, խորհրդարանն ընդունեց բանաձեւ, որտեղ միակողմանի ստանձնված էր ռազմական գործողությունների չվերսկսման մասին պարտավորությունը:

- Իսկ ի՞նչն է խանգարում վերոնշյալ պարտավորության հերթական պաշտոնական վավերացմանը:

- Ներկա պայմաններում, աբխազական եւ օսական կողմից առաջադրվող պահանջը, որ վերոնշյալը վավերացվի առանձին փաստաթղթով, այնքան էլ իմաստավորված չէ: Բոլորի համար ակնհայտ է, որ Վրաստանն ուժ կիրառելու մտադրություն չունի, եթե անգամ ցանկանա, միեւնույն է, այնտեղ ռուսական զորքեր են կանգնած:

Սակայն, երբ նրանք հեռանան այդ տարածքներից, այն ժամանակ էլ հնարավոր եւ իմաստավորված կլինի ձեւակերպել այդ պայմանագիրը: Իսկ մինչ այդ, պետք է քննարկվեն մյուս հարցերը, մյուս հիմնախնդիրները, որոնք կուտակվել են, եւ որոնք իրականում շատ են՝ կապված մարդկանց տեղաշարժերի, արտաքին հարաբերությունների, առեւտրի եւ այլնի հետ:

Պահանջների առաջադրմամբ, նրանք ուղղակի ժամանակ են ձգում, իսկ դա բացասաբար է անդրադառնում հակամարտության կարգավորման գործընթացի վրա, քանի որ, եթե այդպես շարունակվի, այդ դեպքում Վրաստանի բնակչությունը եւ ամբողջ աշխարհը կսկսի մտածել, որ աբխազներն ու օսերը խաղաղության կողմնակից չեն: Եթե այդպես է, ապա զուր ինչո՞ւ ենք ուժերը ծախսում: Նրանք պետք է օգտվեն հարմար առիթից:

- Վրաստանի խորհրդարանում արդեն սկսվել են բռնազավթված տարածքների մասին օրենքում փոփոխությունների ծրարի քննարկումները: Ի՞նչ են տալիս այդ փոփոխությունները, որքանո՞վ են դրանք հրատապ:

- Իրոք, Վրաստանի խորհրդարանում փոփոխությունների առաջին ունկնդրումն անցավ: Ցավոք, իրավաբանական գործընթացը որոշակիորեն ձգձգվեց, սակայն դա մոտ ժամանակներում կավարտվի: Այդ օրենքում փոփոխություններն անհրաժեշտ են ու հրատապ, եւ դրանք պետք է ուղղված լինեն բռնազավթման ու ոչ թե մարդկանց դեմ: Օրինակ, եղել են դեպքեր, երբ մարդիկ, բռնազավթված տարածքների տարանցումով, մուտք են գործել Վրաստան եւ հայտնվել են բանտում: Նմանների թվում կային այնպիսիները, ովքեր տեղեկություն անգամ չունեին, որ դրանով խախտում են Վրաստանի օրենսդրությունը: Գտնում եմ, որ մոտեցումն ավելի շատ մարդասիրական պետք է լինի: Պետք է սահմանենք վարչական տուգանքներ, սակայն՝ ոչ բանտարկություն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՉՀԱՐԿԱԴՐՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄԸ ԿՍԿՍՎԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻՑ

2014 թվականի երկրորդ եռամսյակից կսկսվի չհարկադրվող նվազագույնի վերադարձումը: Ինչպես տեղեկացրել են Վրաստանի ֆինանսների նախարարությունից, ֆիզիկական անձանց աշխատավարձից չհարկադրվող մինիմումի պահման եւ գումարի վերադարձման կարգը հաստատվել էր 2013 թվականի մարտի 29-ին: Հարկային օրենսգրքում ավելացվել էր հոդված 81 պրիմը, որը նախատեսում է վարձած աշխատակիցների համար չհարկադրվող նվազագույնը, 1800 լարիի չափով: Մասնավորապես, չհարկադրվող նվազագույնով կարող են օգտվել այն ֆիզիկական անձինք, ում աշխատավարձը օրացուցային տարվա ընթացքում չի գերազանցում 6000 լարին (միջինը՝ ամսական 500 լարի), եւ վերոնշյալ անձի օրացուցային տարվա վերջին իրավասու է վերադարձնել եկամտահարկի պահումը (առավելագույնը՝ 360 լարի):

ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ֆիզիոլոգիական արձակուրդի տեւողության եւ դրա վճարման ավելացման մասին որոշումը:

Վրաստանի աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն, հղիության, ծննդաբերության, երեխայի խնամքի կամ նորածնի որդեգրման համար, արձակուրդը 477 օրից հասցված է 730 օրացուցային օրվա: Դրանցից նախկին 126-ի դիմաց վճարովի կլինեն 183 օրացուցային օրերը, իսկ հղիության բարդացման կամ երկվորյակների ծննդաբերության դեպքում, 140-ի դիմաց 200 օրացուցային օրերը:

Մինչեւ մեկ տարեկան երեխայի որդեգրման դեպքում, ֆիզիոլոգիական արձակուրդն երեխայի ծննդյան օրվանից սկսած կազմելու է 550 օրացուցային օր, որից 90 օրացուցային օրը վճարովի է:

Բացի այդ, ավելացվում են նաեւ ֆիզիոլոգիական արձակուրդի վճարումը՝ 600 լարիի դիմաց այն կկազմի 1000 լարի:

ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԻ ՄԱՍԸ ԿՏՐՎԻ ՄԻԱՅՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՎ

2014 թվականի հունվարից դեղատներում դեղորայքի մի մասը կտրվի միայն դեղատոմսերով: Վրաստանի առողջապահության նախարարության սույն նախաձեռնությունը կգործարկվի աստիճանաբար եւ կավարտվի ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ին: Ինչպես հայտարարեցին գերատեսչությունում, նորամուծության նպատակն

է բարձրացնել բուժման մակարդակը, նվազեցնել դեղորայքի վրա ծախսերը եւ խստացնել թմրանյութեր պարունակող պրեպարատների նկատմամբ վերահսկողությունը:

Իսկ ինչ վերաբերում է դեղատոմս չպահանջող դեղորայքի վաճառքին, ապա դրանց նկատմամբ սահմանափակում չի սահմանվել: Այդ մասին հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն: «Դեղատոմս չպահանջող դեղորայքները մեր դասակարգմամբ պատկանում են երրորդ խմբին, դրանց իրացման հարցում դեղատներում ոչ մի հիմնախնդիր չի լինի»,- հայտարարեց Սերգեյենկոն: